
Գ Ր Ի Ո Ի Տ Պ Ի Յ Օ Բ Ե Լ Ե Ա Ն Ը

(Ալէքսանդրապօլի բարբառով)

Ծօ, Մկօ, իմացէր էս օր մեր թառ չալող Գօ-
գորին թեղեգրամով կանչեր են Հաշտարխան չալելու
համար:

— Օղորդ Յակօ, ի՞նչ կսես, ընչո՞ւ համար են
կանչէր, հարսնիք է ի՞նչ է:

— Չէ՛, աօ ի՞նչ հարսնիք, ի՞նչ բան, կըսեն թէ
մենձ հանդէս են սարքեր ընտեղ:

— Ախր վճօվ է կանչեր, ընչո՞ւ համար:

— Տեսնեմ կը օր դու հեչ բան չես հասկնար, գլօխդ շատ հաստ է, էն օրը «Ախուրեան»ի մէջ գրած չէ՞ր օր Հաշտարխան թագարուք են տեսէր, դեռ հլա գարնանէն, ու յօրելիան պըտի կատարեն մեր ազգի գիր ու դալմի, տպի հմար, էդոր հըմար էլ ըստից ուստա Գօգորին վուպ կանչեր են:

— Հա, ծօ լաւ ըսիր հմի հասկըցայ, կեցցեն աղբէր, Հաշտարխանի հայերը օր էդպէս ազգասէր են ես Յակօ, տէյ հմի գիտէի թէ Հաշտարխան հէչ հայ շկայ, էդածներն էլ բիտտուն ուսնների հետ խառնուրդ են, հէչ հայէվար խօսել էլ բիլա չիտեն:

— Տօ ախմախ, բանից բէխարար ի՞նչ կխօսիս, կերևի դու հէչ գազէթ չէս կարդա, չէ՞ որ ընտեղ զօջա առաջնորդ կայ, կոնսիստոր կայ, եկզամինէն էլած տէրտէրներ կան, հրա էդոնք սեմ հըմար են, օր էդպէս բաների գլուխ չքաշեն: Գիտես Մկօ էդ ինչըդ տօն է թէ չէ, անկաջ էրա թարիֆ էնէմ, մեր տղերքը օր կարդալ գրել գիտեն, մեր տէրտէրները ժամը օր կ'կարդան գիրք ու աւետարան, մեր գազէթները օր կ'գրեն գիտուն մարդիկը, էդոնք բիթուն գրի հունարն է, ու էդ տօնն է օր կ'կատարին: Էդօր հմար էլ մեր թաժա կաթըղիկօսը ամեն տեղ գրէր է, օր հայերը փարա ժողովեն գրիկեն էջմիածնի կասը պցեն, օր յետե էտոր շահը գեղերի քեասիր ուսումնարաններին տան:

— Շատ լաւ միտք է ես ու իմ Ասաւած, թէ օր գլուխ գայ:

— Հլա ընծի ըսա թէ գիրը հըրա վճիվ է հունարէ:

— Գիրը գիտես վով է հունարէ. ես իմ օդորմած հոգի վարժապետէն իմացեր իմ, օր Սուրբ Մեսրոպ վարդապետն է գտէր: Էս վարդապետը, մեռնիմ էնօր ս. գերեզմանին, շատ սուրբ, գիտուն վարդապէտ է եղեր, շատ շալիշ է եկէր օր գիր գանի, Ասաու կարող զօրութիւնով էրագի մէջ էնօր Նրեշտակը կերևայ ու կըզրէ, 1500 տարի է անցէր էդ վախտւանից, հիմի էդպէս վարդապետ սըր է օր, էդտից յետե գիրն օր գտան, խելքով մարդիկ ախպն են հունար է, էս էլ 400 տարի յառաջ է էղէր. հիմի մենծ խարջեր կենեն յօրելիան կասրքեն, սաղ քաղաքը թոփ կեղնի մէ տեղմ, էլ բազրգեան զանգին աղա մարդիք ըսիմ, էլ զինեաթքեարներ, էլ տէրտէրներ, վարժապետներ, վարժուհիներ ըսեմ չի մնայ բիրագի կեղնին ճառ կ'կարդան, թառ ու քեամանչով, դուխօվով պար կ'խաղան, ունդիկ աղջիկները պօլթալամիշ կեղնին ու յետե կ'ցրւին իրանց աները: Մկօ, գիտես մենակ խօ Հաշտարխանը չէ օր հանգէս է սարքէր, ուրիշ քաղաքներ էլ, ուրտեղ զուար հայեր կան էնոնք էլ հանդէսներ կենին: Հա, օդորդ գազէթի մէջ գրած էր օր մեր էջմիածնայ ճեմարանն էլ մենծ հանգէս կեղնի, ճառեր կ'կարդան:

— Էրնէկ էն աչքերին օր էդ օրը էջմիածին էդ բիտթիւնը կ'տեսնի, ճառերը խօսքերը կ'իմանայ:

— Է՛հ. Մկօ բանըմ ըսեմ, էդ գիտունների, վարդապետների ճառ ու մառը բիթուն ի փառս մարդկան է, ու փարի գլխուն է, փարա գուզին, փարա, փարա հա փարա... հմի էն դարն է օր մեղի պէս քեասիր քիւսուրների երեսն աշող չի էղնի, ես մէ բանմ լաւ գիտեմ, օր մեր ազգը աշխըրքի երեսէն չի կորի հէչ մէ ժամանակ, քանի օր գիր ունի:

ԱՂԷՔՍԱՆԴԻ ՍԱՆՕԵԱՆ